ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք. Գավառ, Արծվաքար փող., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. ул. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. st.Artcvacar, tel. (093) 19-66-68

Էլ. փոստ. arman-erem@mail.ru

№ 03-15/117
2015թ.

«10» սեպտեմբերի

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Դավթյանին

«ԻՋՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով «ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր համայնքում պաշտպանիչ հենապատի կառուցում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 17320,13 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«10» սեպտեմբերի 2015թ
Տնօրեն՝
______________ Յու. Ավետիսյան

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր համայնքում պաշտպանիչ հենապատի կառուցում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Տավուշի մարզպետարան   Նախագծող՝ «ԻՋՆԱՍ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Ներքին Կարմիր Աղբյուրի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Ներքին Կարմիր Աղբյուր համայնքում պաշտպանիչ հենապատի կառուցման շինարարությունը իրականացվում է համայնքի դպրոցի տարածքում:

Նախագծով նախատեսված է հենապատի ժապավենաձև հիմքերի փորում 3-րդ կարգի գրունտներում ,բետոնե նախապատրաստական շերտի կառուցում 0,6մ լայնությամբ և 0,1մ հաստությամբ B-7,5 դասի բետոնից, ժապավենաձև հիմքի կառուցում B-12,5 դասի բուտաբետոնից 0,5մ լայնությամբ և 0,65մ բարձրությամբ, հենապատը նախատեսված է կառուցել կանոնավոր ձևի տուֆ քարից 0,4մ լայնությամբ և 3,05մ բարձրությամբ, որը ամրանավորված է Ø4 $B_{P-1}$ ամրանային ցանցով 50մմx50մմ բջիջով 600մմ քայլով: Նախատեսված է Ե/Բ միաձույլ սյուներ 400մմx400մմ կտրվածքով ամրանավորված Ø18մմ A500c և Ø8մմ Ա-1 դասի ամրաններով: Նախատեսված է նաև Ե/Բ միաձույլ գոտի B-20 դասի բետոնից 0,4x0,25մ կտրվածքով: Ե/Բ միաձույլ գոտին ամրանավորված է Ø18մմ A500c և Ø8մմ Ա-1 դասի ամրաններով:

Հենապատի ընդհանուր երկարությունը կազմում է 162,8 մ, որը կառուցվում է 3 առանձին հատվածներից 48մ, 66.4 և 48.4 մ երկարությամբ, որոնց միջև նախատեսված է բացվածք 1մ լայնությամբ:

Ներկայացված է նախահաշիվ *17320,13* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900.39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

### *Եզրակացություն:*

*«ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիր Աղբյուր համայնքում պաշտպանիչ հենապատի կառուցում»* աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի

համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *17320,13* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդալյան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան